

ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի հայցորդ Մելիք Արտաշեսի Մելիքյանի «Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում» ատենախոսության

Հանցագործության պրովոկացիայի ինստիտուտին առնչվող խնդիրները մշտապես գտնվել և շարունակում են մնալ քրեագետների հետաքրքրության կենտրոնում: Քրեաիրավական տեսության մեջ վիճահարույց են հանցագործության պրովոկացիայի և դրոշության սահմանազատման, իրավաչափ և ոչ իրավաչափ պրովոկացիայի տարանջատման, պրովոկացիայի արդյունքում հանցավոր վարքագիծ դրսևորած անձի քրեական պատասխանատվության և պատժի հարցերը:

Կրիմինալոգիական առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում հանցագործության պրովոկացիայի դերը հանցավոր վարքագծի ձևավորման և դրսևորման առումով. ուշագրավ են հատկապես պրովոկացիայի և դրան ենթարկվող անձի ինքնատիրապետման, այլ անձի ազդեցությանը ենթարկվելու, արժանապատվության, արժեքային համակարգի, բարոյական արժեքների հարաբերակցությանն ուղղված ուսումնասիրությունները:

2021 թ.-ի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի թե Ընդհանուր և թե Հատուկ մասերում ևս անդրադարձ է կատարվել հանցագործության պրովոկացիային, մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի համար, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ և 34-րդ հոդվածները պրովոկացիան (սադրումը) դիտում են որպես անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակների բացակայության հիմք:

Հարկ է նշել, որ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրություններում ևս միանշանակ մոտեցում չկա այս ինստիտուտի կարգավորման առումով. օրինակ, անգլիական իրավունքում պրովոկացիան անմիջականորեն ազդում է սպանության աստիճանի վրա, Վրաստանում պատասխանատվություն է սահմանվում ցանկացած

հանցանքի պրովոկացնելու համար, Գերմանիայում՝ պրովոկացիան դիտարկվում է որպես պատիժը մեղմացնող հանգամանք և այլն:

Բնական է, որ հանցագործության պրովոկացիայի ինստիտուտի նկատմամբ նման տարբերակված մոտեցումների և կարգավորումների պարագայում՝ ընտրված թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը կասկած չի հարուցում և վկայում է Մ. Մելիքյանի կողմից ընտրված թեմայի արդիականության և կարևորության մասին:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վեց ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության, իրավական ակտերի և պրակտիկայի նյութերի ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանն ու տեսական, իրավական, փորձառնական, մեթոդաբանական հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխում՝ Հանցագործության պրովոկացիայի տեսական հիմունքները քրեական իրավունքում, հեղինակը վերլուծության է ենթարկում պրովոկացիան որպես սոցիալական երևույթ, և այն դիտարկում որպես քողարկված բնույթի արարք, անձանց որոշակի շրջանակի ուղղված ներգործություն՝ միտված ներգործության ենթարկված անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջացնելուն: Ընդհանուր առմամբ համաձայնվելով հեղինակի հետ՝ հստակեցման կարիք ունի այն, թե ի՞նչ անբարենպաստ հետևանքների մասին է խոսքը:

Հեղինակը քննարկում է նաև հանցագործության պրովոկացիայի բնորոշումը քրեական իրավունքում՝ ներկայացնելով արտասահմանյան մի շարք երկրների կարգավորումները: Հեղինակի բերած գրեթե բոլոր տարբերակներում պրովոկացիան դիտարկվում է որպես պրովոկատորի կողմից գործադրված ներգործություն՝ ուղղված պրովոկացված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքերի ստեղծմանը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ Հանցագործության պրովոկացիայի իրավական կարգավորումը նյութական և դատավարական իրավունքում. նվիրված է արտասահմանյան և ներպետական քրեական իրավունքում, ինչպես նաև Մարդու

իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում հանցագործության վերաբերյալ կարգավորումների և դիրքորոշումների վերլուծությանը:

Հեղինակը իր աշխատանքի շրջանակներում անդրադառնում է իրավաչափ և ոչ իրավաչափ պրովոկացիայի տարբերակմանը, օրինակ՝ օպերատիվ հետախուզական միջոցառումների համատեքստում: Քննության առնելով ՀՀ քրեական օրենսդրության մեջ տեղ գտած հանցագործության պրովոկացիայի կարգավորումները, հեղինակը իրավացիորեն նշում է, որ իրավաբանական տեխնիկայի տեսակետից առավել ճիշտ կլիներ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասերում միատեսակ եզրույթների օգտագործումը, ոչ թե ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ և 34-րդ հոդվածներում «սադրում», իսկ Հատուկ մասում՝ «պրովոկացիա» բառերի գործածումը:

Աշխատանքի երրորդ գլխում՝ Հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրները քրեական իրավունքի ընդհանուր և հատուկ մասերում, հեղինակն անդրադառնում է հանցագործության պրովոկացիայի և քրեական պատասխանատվությունը բացառող առանձին հանգամանքներին, պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից ազատելուն առնչվող հիմնախնդիրների վերլուծությանը:

Հեղինակը գտնում է, որ սուսկ պրովոկացիայի ազդեցությամբ գործելը չպետք է յուրաքանչյուր դեպքում մեխանիկորեն բացառի անհրաժեշտ պաշտպանության վիճակը, քանի որ հնարավոր է, որ պրովոկացիայի ենթարկված անձը առավել ինստենսիվ միջոցներ կիրառի կամ ավելի մեծ վնաս փորձի պատճառել, քան նախատեսված էր պրովոկատորի կողմից: Ըստ հեղինակի՝ հանցագործության պրովոկացիան կարող է իսպառ բացառել անհրաժեշտ պաշտպանության վիճակը միայն այն դեպքում, երբ պրովոկացիայի ենթարկված անձի արարքները համաչափ են ոտնձգության բնույթին, վտանգավորությանը, ինչպես նաև բխում են օբյեկտիվ իրականությունից:

Հեղինակը առաջարկել է լրամշակումներ իրականացնել ՀՀ քրեական օրենսգրքում, մասնավորապես, որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք նախատեսել հանցանքը պրովոկացիայի ազդեցությամբ կատարելը, այն նաև նախատեսել որպես պատասխանատվությունից ազատելու նոր

հիմք ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների պարագայում, պայմանով, որ կատարված արարքի հետևանքով էական վնաս չի պատճառվել քրեական օրենքով պաշտպանվող օբյեկտին կամ պրովոկացիա իրականացնողը հատուցել է վնասը կամ այլ կերպ շտկել հանցագործությամբ պատճառված վնասը (էջ 87): Իհարկե, ներկայացված առաջարկը տեխնիկական առումով հստակեցման կարիք ունի, քանի որ անհասկանալի է, թե ինչ է նշանակում «շտկել» հանցագործությամբ պատճառված վնասը:

Հեղինակը մանրակրկիտ անդրադարձ է կատարել նաև քննարկվող ինստիտուտի և հանցակցության տարբերակմանը:

Հեղինակի առավել հետևողական առաջարկությունը վերաբերում է հանցագործության պրովոկացիան որպես ինքնուրույն հանցակազմ նախատեսելուն: Հեղինակը ներկայացնում է նաև այդ հանցակազմի ծանրացնող հանգամանքներով տեսակները, սակայն հենց աշխատանքում նշում է, որ դրանք դեռևս լրամշակման և լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն (էջ 109):

Պետք է նշել, որ հեղինակին հաջողվել է բովանդակալից և հետաքրքիր աշխատանք ներկայացնել: Ներկայացված աշխատանքի շրջանակներում հեղինակը կատարել է բազմաթիվ առաջարկություններ, փորձել արտահայտել իր տեսակետները հանցագործության պրովոկացիայի գիտական վիճաբանությունների առարկա հանդիսացող հիմնախնդիրների վերաբերյալ: Հեղինակը լայնորեն կիրառել է ՀՀ դատական պրակտիկայի, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նյութերը, ինչը արժեքավորում է կատարված աշխատանքը:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Հեղինակը, անդրադառնալով հանցագործության պրովոկացիային՝ նշում է, որ պրովոկացիան անձի կողմից քողարկված մեթոդների կիրառմամբ ուղեկցվող ներգործությունն է, որի նպատակն է այլ անձին հանցագործության մղելուն՝ նրա նկատմամբ քրեական պատասխանատվության հիմքեր ստեղծելու կամ այլ բացասական հետևանքներ առաջացնելու նպատակով (էջ 24): Կարծում եմ, «այլ բացասական հետևանքներ» արտահայտությունը հստակեցնելու կարիք ունի: Մինևույն ժամանակ, ցանկալի կլիներ հասկանալ, թե հեղինակի կողմից ի՞նչ գնահատականի կարծանանա այն իրավիճակը, երբ պրովոկատորը անձից չի

թաքցնում իր վարքագծի իրական նպատակը, քողարկված չի գործում, սադրում է նշելով, որ հատուկ է դա անում, անձին հակաիրավական վարքագծի մղելու նպատակով: Արդյո՞ք նման իրավիճակները ևս պետք է գնահատվեն որպես հանցագործության պրովոկացիա:

2. Աշխատանքում հեղինակը մանրակրկիտ վերլուծության է ենթարկել հանցագործության պրովոկացիայի հիմնախնդիրը, այն պայմաններում, երբ պրովոկացիան դրսևորվել է կոնկրետ ֆիզիկական անձի կողմից:

Վերջին ժամանակաշրջանում քրեաիրավական գրականության մեջ քննության առարկա է դարձել նաև հանցագործության պրովոկացիան իրավաբանական անձի կողմից կատարելը, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ հասարակության չկոնկրետացված անձանց որոշակի շրջանակի կողմից կատարելը (օրինակ՝ ահաբեկչություն պրովոկացնելը): Թեև հեղինակը թուուցիկ անդրադարձ կատարել է իրավաբանական անձի կողմից պրովոկացիայի դրսևորման հնարավորությանը, սակայն աշխատանք էապես կշահեր, եթե հեղինակն առավել հիմնավոր ներկայացներ իրավաբանական անձի կողմից պրովոկացիայի դրսևորման հարցերին:

3. Պաշտպանության ներկայացվող դրույթ 5-ում հեղինակը ներկայացրել է ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործության պրովոկացիան քրեականացնելու առաջարկ, այն ձևակերպելով հետևյալ կերպ՝ հանցագործության պրովոկացիան՝ հանցակցության հատկանիշների բացակայության պարագայում՝ քրեական օրենսգրքով նախատեսված արարքի կատարմանը անձին հրահրելուն ուղղված ներգործությունը՝ տվյալ անձի նկատմամբ քրեական պատասխանատվության հիմքեր ստեղծելու, շանտաժի, շորթման կամ նրան ֆիզիկական, գույքային կամ այլ էական վնաս հասցնելու նպատակով:

Ցանկալի կլիներ, որ հեղինակը հիմնավորեր, թե ինչով է պայմանավորված շորթման նպատակը առաջարկվող հանցակազմի ձևակերպման մեջ նախատեսելը: Եթե խոսքը վերաբերում է հանցանքի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը անձի դեմ օգտագործելու նպատակին, ապա «շանտաժ» եզրույթի օգտագործումը, ըստ էության, կարգավորում է այդ խնդիրը:

Այնուհանդերձ, ներկայացված դիտարկումները բնավ չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Մեկիք Արտաշեսի Մելիքյանի «Հանցագործության պրովոկացիան քրեական իրավունքում» վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, ի.գ.դ.

Ա. Մարգարյան

Քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Ա. Մարգարյանի ստորագրությունը հաստատում եմ:

Դեկանի տեղակալ



Ա. Պետրոսյան